ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

N //30.2/46183-2024
«14» նոյեմբերի 2024թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրով որպես արդարադատության ոլորտում պետական քաղաքականութան կարևոր ուղղություն և միջոցառում ամրագրվել է հաշտարարության զարգացումը, որի համատեքստում կատարված օրենսդրական բարեփոխումներով սահմանվել է ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ինստիտուտը: Մասնավորապես, 2022 թվականին ընդունված ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով լրացված 2-րդ հոդվածի 2.1-ին մասի համաձայն՝ ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է բացառությամբ որոշ դեպքերի: Նույն օրենքի անցումային դրույթների (հոդված 24, մաս 2) համաձայն՝ նշված կարգավորումը ուժի մեջ է մտնելու հաշտարարների հատուկ ցանկը առնվազն 15 արտոնագրված հաշտարարով համալրվելու դեպքում, ինչը նախատեսվում է ապահովել սույն թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ հաշվի առնելով Արդարադատության նախարարության կողմից վերջին մեկ տարվա ընթացքում կազմակերպված հաշտարարների որակավորման գործընթացների և արդեն իսկ 79 արտոնագրված հաշտարարների առկայությունը:

Հասցե. Կազգեն Ալիխանյան փ. 3/8, Երևան, 0010
Հեռ.՝ +374 59 40 54 | էլ. փոստ՝ legislativecenter@moj.am

Ինչպես կարելի է նկատել, նախատեսվող փոփոխությունների արդյունքում ընտանեկան վեճերի մի ստվար զանգված՝ շուրջ 70 տոկոսը, մինչ դատարան դիմելը նախապես ենթակա է լինելու հաշտարարության միջոցով լուծման: Նշված հանգամանքով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում հանրային իրազեկման արշավներ իրականացնելու, որոնք էլ ամրագրված են Արդարադատության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 817-Ա հրամանի Հավելված N 1-ով: Հանրային իրազեկման նման միջոցառումների շարքում, ի թիվս այլնի, սահմանվել է նաև տեղեկատվական հանդիպումների կազմակերպում թիրախային խմբերի հետ, այդ թվում՝ համայնքային ծառայողների, ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, հանրային պաշտպանների, համայնքային ծառայողների և բոլոր հետաքրքրված անձանց մասնակցությամբ:

Նշվածի համատեքստում խնդրում ենք Ձեր աջակցությունը՝ Արդարադատության նախարարության և գործընկերների մասնակցությամբ առաջիկա հանդիպման մասին տեղեկատվությունը համապատասխան թիրախային խմբերի՝ հատկապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների և համայնքային ծառայողների շրջանում տարածելու և նրանց մասնակցությունը խթանելու հարցում: Հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 22-ին՝ ժամը 11:00-13:00-ն Արմավիր քաղաքում (հասցե՝ ք. Արմավիր, Շահումյան 68 Ա): Նման աջակցությունը մեծապես կնպաստի հաշտարարության ոլորտի բարեփոխումներին և այդ բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, որոնք ազդեցություն են ունենալու անձանց՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման գործընթացի կարգավորման վրա, հանրության լայն շրջանակներին հանրամատչելի կերպով իրազեկելու հարցում:

Ստորև ներկայացնում ենք մասնակցության ձևանմուշը շրջանառելու նպատակով՝ https://forms.gle/nv5NYdFTuE11vEVp9

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ

Invalid signature

X

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ

Signed by: DADUNTS TIGRAN 2714930743

ՏԻԳՐԱՆ ԴԱԴՈՒՆՑ

Կատարող՝ 010594052

Հասցե. Վազգեն Սարգսյան փ. 3/8, Երևան, 0010
Հեռ.՝ +374 59 40 54 | Էլ. փոստ՝ legislativecenter@moj.am